

Կ. ԿԱՐՊԻՆՍԿԻ

ՄԵՐ ՆՈՐ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

314

Պոլիտարներ բոլոր յերկիրների, միացն'ք





29 JAN 2010

Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ

342(47)

ՄԵՐ ՆՈՐ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1937



Միևայիլ Իվանովիչ Կալինինը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության տասնյոթերորդ տարեդարձի առթիվ տված՝ ղեկուցման մեջ կատակով ասաց, վոր մի տարուց հետո խորհրդային իշխանությունը մեր որենքների համաձայն «չափահաս» և դառնում: Իսկ բուրժուազիան մարդարեանում եր, թե խորհրդային իշխանությունը «մանկական հասակն» անդամ չի ապրի:

Այո՛, խորհրդային իշխանությունը, հակառակ բուրժուազիայի կոկոռի, աճեց և ամրացավ, դառնալով հզոր խորհրդային սոցիալիստական պետություն, վորի հեռ հաշվի յեն նստում, վորից վախենում են խոշորագույն կապիտալիստական պետությունները:

Նորհրդային պետական կարգերի սկիզբը դրեց Պրոլետարական սոցիալիստական մեծ հեղափոխությունը, վորը, տասպալելով բուրժուազիայի իշխանությունը, մեր յերկրում հաստատեց պրոլետարիատի ղեկստատուրա:

Բանխորների հաղթական ղինված ապստամբություն որը՝ 1917 թ. նոյեմբերի 7-ին (հին տոմարով հոկտեմբերի 25-ին) Պետրոգրադում, այժմյան Լենինգրադում, բացվեց խորհուրդների համառուսական յերկրորդ համագումարը: Այդ համագումարը հաստատեց իշխանության անցումը խորհուրդների ձեռքը:

Նոր պետական կարգերի հիմնական դրույթները



1-34249P



Հաստատվեցին խորհուրդների Համառուսական յեր-  
բորդ Համագումարի կողմից՝ 1918 թ. հունվարին:  
Այդ Համագումարն ընդունեց Լեւինի գրած «Աշխատա-  
վար և շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլա-  
րացիան<sup>1)</sup>»: Այդ նշանավոր պատմական փաստաթղ-  
թում մենք կարդում ենք.

«Ռուսաստանը հայտարարվում է Բանվորնե-  
րի, գինվորների և գյուղացիների պատգամավոր-  
ների խորհուրդների հանրապետություն: Ամբողջ  
իշխանությունը կենտրոնում և տեղերում պատ-  
կանում է այդ խորհուրդներին»:

«... շահագործողները չեն կարող տեղ ունե-  
ցող իշխանության մարմիններից և վոչ մեկում»:  
Դեկլարացիան ասում է, Վոր խորհրդային իշխա-  
նության հիմնական խնդիրն է՝

«... վոչնչացնել մարդու ամեն տեսակի շահա-  
գործումը մարդու կողմից, իսպառ վերացնել հա-  
սարակության բաժանումը դասակարգերի, անո-  
ղոք կերպով մեշելը շահագործողներին, սահմա-  
նել հասարակության սոցիալիստական կազմա-  
կերպություն և սոցիալիզմի հաղթանակ բոլոր  
յերկիրներում»:

Իրավունքների այդ դեկլարացիան հետագայում  
մտալ հիմնական որեմֆի կամ Ռուսաստանի խորհրդ-  
դային հանրապետության Սահմանադրության մեջ:  
Սահմանադրությունն ընդունվեց խորհուրդների Հա-  
մառուսական հինգերորդ Համագումարում 1918 թ. Վի  
հուլիսին: Սահմանադրությունն զլխավոր հողվածները  
գրել են Լեւինն ու Ստալինը:

1) Այսինքն՝ հայտարարությունը:

Բուրժուազիան մի պատվիրան է ունեցել. «չաշ-  
խատող թող ողտվի կյանքի բոլոր բարիքները»:

Մեր Սահմանադրությունը գրի առավ մի ուրիշ  
պատվիրան՝

«Ձաշխատողը քոչ չուտի»:

Ով չի աշխատում, նա չպետք է ուտի, ուր մնաց  
թե պետություն կառավարի:

Մեր Սահմանադրությունը միայն աշխատավոր-  
ներին վերապահեց իշխանությունն ընտրելու իրա-  
վունքը: Մեր Սահմանադրությունն ընտրական իրա-  
վունքներից զրկեց շահագործողներին, — բոլոր նը-  
բանց, ովքեր ապրել են անաշխատ յեկամուտներով:

Դրանով մեր պետական կառուցվածքը արմատա-  
պես տարբերվում է կապիտալիստական բոլոր պետու-  
թյունների կառուցվածքից: Այնտեղ իշխանության  
գլուխ է կանգնած բուրժուազիան, Վորը շահագոր-  
ծում ու կեղեքում է աշխատավորությանը: Մինչև  
անգամ ամենադեմոկրատական բուրժուական պետու-  
թյուններում աշխատավորական մասսաները գործնա-  
կանում մեկուսացվում են պետությունը կառավարե-  
լուն մասնակցելուց:

Վերջենք Վորե կապիտալիստական յերկրի պառ-  
լամենտ: Այնտեղ պատգամավորների մեջ մենք կը-  
զտենք՝ կալվածատերեր, Փարբիկանտներ, դործարա-  
նատերեր, բանկիրներ, վաճառականներ, կուլակներ,  
աստիճանավորներ, տերտերներ, բուրժուական ինտե-  
լիգենցիա, բուրժուազիայի զանազան սպասավորներ:  
Իսկ բանվոր դասակարգի հեղափոխական ներկայացու-  
ցիչներ մենք այնտեղ բոլորովին չենք տեսնում, կամ  
նրանք աննշան փոքրամասնություն են կաղմում:

Իսկ ահա մեր բարձրագույն իշխանություն—Սոր-



հուրդների Համաժխութենական (ութերորդ արտա-  
կարդ) համագումարի կաղմը.— բանլորներ՝ 848 հո-  
շի (այդ թվում արտադրությունից՝ արդյունաբերու-  
թյան մեջ և տրանսպորտում աշխատող 317 բանլոր և  
խորհանտեսություններում ու ՄՏԿ-ներում աշխատող  
99 բանլոր), դյուղացիներ՝ 805 (այդ թվում 261 կուլ-  
անտեսականներ), դյուղական խորհուրդների և շքըջ-  
դործկոմիտեերի նախագահներ՝ 318, խորհուրդների  
յերկրային, մարդային և հանրապետական կենտրոնա-  
կան դործադիր կոմիտեաների աշխատողներ՝ 344, կու-  
սակցական և սլոբոժնիսկային կաղմակերպություն-  
ների աշխատողներ՝ 326, ձեռնարկությունների դե-  
րեկտորներ՝ 94, պատգամավորներ Կարմիր Բանակից  
ու նավատորմից՝ 152, ինժեներներ, դյուղատնտես-  
ներ, գիտության ու արվեստի աշխատողներ՝ 105:

Պատգամավորների թվում կան 419 կին:

Պատգամավորները բոլորն էլ աշխատավորներ են,  
և վոչ մի շահագործող չկա:

Մարդկության պատմության մեջ՝ առաջին անգամ  
միայն Սորհրդային պետության մեջ աշխատավորներն  
իսկական ազատություն ստացան՝ իրենք իրենց կյանքն  
առանց կարվածատերերի ու կապիտալիստների կաղմա-  
կերպելու ազատություն:

Սորհրդային պետությունն ստեղծեց Կարմիր Բա-  
նակը, վորպեսզի պաշտպանի աշխատավորության ա-  
զատությունը բուրժուազիայի վտանգություններից:

Սորհրդային պետությունն ապահովեց ամբողջ աշ-  
խատավորական մասսայի ղեկավարությունը՝ այդ  
մասսայի առաջավոր մասի, բանլոր դասակարգի հա-  
մար:

Սորհրդային պետությունը բռնկեցիկների կոմու-

նիստական կուսակցության, Լենինի-Ստալինի կու-  
սակցության ղեկավարությամբ ստեղծեց բոլոր ան-  
հրաժեշտ պայմանները՝ հաջողությամբ պայքարելու  
սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու  
համար:



## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային իշխանությունն սկզբում առաջացավ Ռուսաստանի կենտրոնում: Այնուհետև խորհրդային իշխանությունն հաստատվեց նաև նախկին ցարական կայսրության ծայրամասերում:

Ուկրաինայում, Բելուռուսիայում, Կովկասում խորհրդային հանրապետությունների առաջացման և հաստատման զուգընթաց, նրանք անմիջապես յեղբայրական հարաբերությունները մեջ էյին մտնում Ռուսաստանի խորհրդային հանրապետության հետ: 1920—1921 թվականների ընթացքում Ադրբեջանական, Ուկրաինական, Բելուռուսական, Վրացական և Հայկական խորհրդային հանրապետությունները դաշնագրեր կնքեցին Ռուսաստանի խորհրդային հանրապետության հետ:

Այսպիսով՝ խորհրդային իշխանությունն ու կոմունիստական կուսակցությունը հենց սկզբից ստեղծեցին ժողովուրդների միությունն նախկին ցարական կայսրության տերիտորիայում:

Դեռևս «Աշխատավոր և շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիան» հայտարարում էր, վոր «Ռուսաստանի խորհրդային հանրապետությունը «ազատ ազգերի (ժողովուրդների) ազատ միությունն է», խորհրդային ազգային հանրապետությունների «Փեղերացիա» (միավորում) է»:

Լենինի միտքն այն էր, վոր խորհրդային բոլոր

հանրապետությունները պետք է կազմեն խորհրդային սոցիալիստական հանրապետությունների մի միություն:

Լենինի միտքն այն էր, վոր բոլոր յերկիրների և բոլոր ազգությունների բանվորներն ու գյուղացիները պետք է միանան համաշխարհային խորհրդային սոցիալիստական մի հանրապետության մեջ:

Լենինի միտքը խորհրդային հանրապետությունների միության մասին շուտով իրականացավ: Այդ միությունը կազմվեց և ամրացավ դեռևս՝ կապիտալիստների, կալվածատերերի, կուլակների, և նրանց սղնության յեկած ոտարերկրյա բուրժուազիայի դեմ մղվող քաղաքացիական պատերազմի ժամանակ: 1922 թվականին բոլոր խորհրդային հանրապետություններն իրենց համադրումներում միահամուռ վորոշեցին, վոր սոցիալիստական շինարարության հաջողության համար և կապիտալիստական պետությունների դեմ պաշտպանվելու համար անհրաժեշտ է համախմբվել խորհրդային սոցիալիստական հանրապետությունների մի միության մեջ:

1922 թ. դեկտեմբերին կայացավ խորհրդային բոլոր հանրապետությունների առաջին ընդհանուր համագումարը: Այնտեղ ընկ. Ստալինի ղեկուցման առիթով ընդունվեցին դեկլարացիա և խորհրդային հանրապետությունների պայմանագիր՝ «խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը մի միութենական պետության» մեջ միավորելու մասին:

Այդ դեկլարացիան և պայմանագիրը կազմեցին խորհրդային Միության հիմնական որենգը—Սահմանադրությունը, վորը խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կենտրոնական



գործադիր կոմիտեն գործադրութեան դրեց 1923 թվի  
հունիսի 6-ին :

Միութենական առաջին Սահմանադրութիւնը  
վերջնականապէս հաստատվեց խորհուրդներէ Համա-  
միութենական յերկրորդ համադումարում՝ 1924 թվի  
հունվարին :

Խորհրդային Միութեան այդ Սահմանադրութիւնը  
կազմել և ընկեր Ստալինը : Այնտեղ ասվում է .

«Այս միութիւնը իրավահավասար ժողո-  
վուրդների կամավոր միավորում է» :

«Յարաբանչյուր հանրապետութեան համար  
ապահովված է միութեանից ազատութիւն դուրս  
գալու իրավունքը» :

«Մուտքը Միութեան մեջ ազատ է ինչպէս գո-  
յութիւն ունեցող, նույնպէս և հետագայում ա-  
ռաջանալիք բոլոր սոցիալիստական հանրապետու-  
թիւնների համար» :

Մեր Խորհրդային Միութիւնը գրավում է Արևե-  
լյան Յեմլոստան և Ասիայի հսկայական մասը : Նրա  
տերիտորիաները (հողերը) աշխարհի մեկ վեցերորդ  
մասն են կազմում :

Խորհրդային Միութեան մեծ ու փոքր բոլոր ժողո-  
ղուրդներն ունեն իրենց պետական խորհրդային կա-  
ռավարումը, իրենց հիմնարկութիւնները, դպրոցները  
և իրենց կյանքը սոցիալիստական հիմունքներով կա-  
ռուցելու լրիվ հնարավորութիւն :

Դրա հետ միասին այդ բոլոր ժողովուրդներն ի մի  
վերցրած կազմում են գործի բազմազգ սոցիալիստա-  
կան պետութիւն—խորհրդային Սոցիալիստական Հան-  
րապետութիւնների Միութիւնը :

Խորհրդային Միութիւնը ղեկավարում է խոր-  
հրդային բոլոր հանրապետութիւնները և պահպա-  
նում է խորհրդային յուրաքանչյուր հանրապետութեան  
զերազույն իրավունքները :



## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴ- ՆԵՐԻ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հին Ռուսաստանում ուս ազգի կալվածատերերն ու կապիտալիստները կեղեքում և դաժանորեն շահագործում էյին մյուս բոլոր ժողովուրդներին: Ֆարական իշխանութիւնն արդեւում էր մյուս ժողովուրդներին մայրենի լեզվով հանդես գալ հասարակական վայրերում, մայրենի լեզվով սովորեցնել յերեխաներին, մայրենի լեզվով տպագրել գրքեր և թերթեր, ազատորեն ընտրել բնակութեան վայրը:

Ռուսական ազգի բուրժուազկան ժողովուրդների միջև հրահրում էր ատելութիւն, սարքում էր կոտորած ու ջարդեր, մի ազգութիւնը զրգոում էր մյուսի դեմ՝ ուսներին՝ հրեաների, սներին՝ ինգուչների, հայերին՝ թուրքերի դեմ, վորպեսզի ավելի հեշտութեամբ ճնշի ու շահագործի յուրաքանչյուր ազգութեան աշխատավորներին:

Ընկ. Ստալինն ասում է:

«Հին ժամանակ, յերբ մեր յերկրում իշխանութեան զլուխ կանգնած էյին ցարը, կապիտալիստները, կալվածատերերը, կառավարութեան քաղաքականութիւնն այն էր, վորպեսզի ժողովուրդներից մեկը—ուս. ժողովուրդը—գարձնի դերիշխող, իսկ մնացած բոլոր ժողովուրդները՝ յենթարկված ու ճնշված: Դա դադանային, գայլի քաղաքականութիւն էր»:

Մեր կուսակցութիւնը ինդիր առաջադրեց բոլոր

ազգերի, բոլոր ժողովուրդների իրավունքների հավասարութիւնն ձեռք բերել: Մեր կուսակցութիւնը պահանջում էր ազգերի ինքնորոշման իրավունք, այսինքն՝ յուրաքանչյուր ժողովրդի համար իր բախտը վորոշելու իրավունք, թեկուզ, մինչև անգամ, Ռուսաստանից բաժանվելու և անկախ պետութիւն կազմելու իրավունք:

Այս չի նշանակում, վոր բոլշեիկները ցանկանում էյին Ռուսաստանը բաժանել ու մասնատել բազմաթիվ մանր պետութիւնների: Ընդհակառակը՝ բոլշեիկները կողմնակից էյին մեր բոլոր ժողովուրդներին միավորմանը մի մեծ պետութեան մեջ, բայց կամավոր միացման, իրավունքների հավասարութեան պայմաններում:

Ահա թե ինչու բոլշեիկները պահանջում էյին ազգերի ինքնորոշման իրավունք և միաժամանակ պայքարում էյին, վորպեսզի հաստատվի բոլոր ազգերի աշխատավորների յեղբայրական միութիւն՝ հանուն ազատագրութեան, հանուն սոցիալիզմի՝ բոլոր ազգերի բուրժուազիայի դեմ պայքար մղելու համար:

Բանվոր դասակարգը վերցնելով իշխանութիւնը, ոժանդակեց ցարական Ռուսաստանի կողմից ճնշված բոլոր ազգութիւնների աշխատավորներին՝ տապալելու իրենց կալվածատերերին ու կապիտալիստներին և հաստատելու բանվորադուրադիական իշխանութիւն:

Ընկեր Ստալինն ասում է.

«1917 թվի հոկտեմբերին, յերբ մեզ մոտ ծափավեց սրողետարական մեծ հեղափոխութիւնը... մեծ Լենինը, մեր ուսուցիչը, մեր հայրն ու դաստիարակն ասաց, վոր այսուհետև չպետք է լինեն վոչ տիրապետող, վոչ յենթակա ժողովուրդը»:



ներ, վոր ժողովուրդները պետք է լինեն համար  
և աղատ: Դրանով նա դերեզմանում թողեց ցա-  
րական հին, բուրժուական քաղաքականությունը  
և հոչակեց նոր, բուրժուական քաղաքականու-  
թյուն—մեր յերկրի ժողովուրդները բարեկամու-  
թյան քաղաքականությունը, յեղբայրության քա-  
ղաքականությունը»:

Խորհրդային իշխանությունը, բանվոր դասակար-  
գի դիկտատուրան, վոչնչացրեց ազգային նկունքն,  
այսինքն՝ մի ժողովրդի տիրապետությունը մյուսները  
վրա: Խորհրդային իշխանությունը սահմանեց ազգային  
իրավահավասարություն, այսինքն՝ իրավունքների  
հավասարություն Խորհրդային Միության բոլոր ազ-  
գերի և ցեղերի համար: Խորհրդային իշխանությունն  
ապահովեց տնտեսության և կուլտուրայի զարգացումն  
ազգային հանրապետություններում և ոչնչում է բոլոր  
հետամնաց ազգերին հասնելու մեր առաջավոր ժողո-  
վուրդներին՝ տնտեսական, հասարակական, պետական  
և կուլտուրական տեսակետից:

Վերցնենք, որինակի համար, Խորհրդային Միու-  
թյան ամենավոր ժողովուրդներից մեկը, վորն ապ-  
րում է Սիբիրի Սայանյան լեռներում: Մինչև խորհրդ-  
ային իշխանությունն այդ ցեղը զբաղվում էր բացա-  
ռապես յեղջերվապահությամբ: Այդ ցեղը չգիտեր, թե  
ինչ բան է տաք բնակարանը, դուրս չէր գալիս դա-  
ղանների մորթիներից: Չգիտեր ինչ բան է կաղամբը,  
վարունգը, կարտոֆիլը: Չունեի կովեր: Ամբողջ ժո-  
ղովրդի մեջ մի գրագետ կար: Յեկ այդ ցեղն արհա-  
մարհանքով կոչում էին «կարագաններ», վոր նշա-  
նակում է «սև սագեր»:

Այժմ այդ ցեղը կոչվում է «Թոֆալարներ», վոր

նրանց լեզվով նշանակում է «մարդիկ»: Թոֆալարները  
մեջ չկա վոչ մի անգրագետ: Նրանք սկսել են զբաղվել  
հողագործությամբ, ձեռք են բերել կովեր, ապրում են  
տաք, մաքուր և վառարաններ ունեցող տներում: Յու-  
րաբանչյուր տնտեսություն բանջարանոց ունի: Թո-  
ֆալարներն ունեն իրենց կուլտեսությունները: Թո-  
ֆալարներն ունեն իրենց խորհուրդների բոֆալարա-  
կան շրջանային գործադիր կամիտենք:

Խորհրդային Միությունը և մեր կոմունիստական  
կուսակցությունը տնտեսական, հասարակական, պե-  
տական և կուլտուրական յեղբայրական ուղևություն են  
ցույց տալիս խորհրդային բոլոր հանրապետություն-  
ներին, մեր բոլոր ժողովուրդներին:

Խորհրդային Միությունն ու մեր կուսակցությու-  
նըն իրականացրին ԽՍՀՄ-ի բոլոր ժողովուրդների յեղ-  
բայրական համագործակցությունը սոցիալիզմի հիման  
վրա:

Խորհրդային Միության ժողովուրդների բարեկա-  
մությունն աճում և ամրանում է: Ընկեր Ստալինն  
ասում է.

«Իսկ ԽՍՀՄ-ի ժողովուրդների բարեկամու-  
թյունը խոշոր և լուրջ նվաճում է: Վորովհետե  
քանի դեռ այդ բարեկամությունը դոյություն ու-  
նի, մեր յերկրի ժողովուրդները կլինեն ազատ և  
անհաղթելի: Վոչ վոք սարսափելի չե մեզ համար,  
վո՛չ ներքին, վո՛չ արտաքին թշնամիները, քանի  
դեռ այդ բարեկամությունն ապրում է և առողջ է»:

Մեր Խորհրդային Միությունը, զորեղ բաղմտղ  
սոցիալիստական այդ պետությունը, վողջ աշխարհի  
աշխատավորություն համար ժողովուրդների յեղբայ-  
րական համագործակցությունն որինակ է համդաս-



## ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԸ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՍԵՂԾՈՂՆ Ե

Սահմանադրութիւնը՝ այդ պետական և հասարակական կյանքի կանոնադրութիւնն է: Փոխվում է կյանքը, փոխվում է նաև սահմանադրութիւնը:

1935 թվի փետրվարին Խորհուրդները Համամիութենական յոթերորդ համադումարը վորոչեց կարևոր փոփոխութիւններ մտցնել Խորհրդային սահմանադրութիւն մեջ:

Այդ փոփոխութիւնների վերաբերյալ առաջադրութիւնը կատարեց կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեն, իսկ հենց Կենտրոնական Կոմիտեյում՝ ընկեր Ստալինը: Ընկեր Ստալինի դիտարկումով մի հատուկ հանձնաժողով մշակեց Խորհրդային Միութեան նոր Սահմանադրութեան նախագիծը: Այդ նախագիծն ընդունեց կուսակցութեան Կենտրոնական կոմիտեյի պլենումը և Կենտրոնական Գործադիր կոմիտեյի Նախագահութիւնը, վորից հետո տպագրվեց թերթերում համաժողովրդական քննարկման համար: Այդ քննարկումը շարունակվեց հինգ ամիս: Առաջարկվեցին տասնյակ հարարավոր ուղղումներ և լրացումներ: Նոր Սահմանադրութեան նախագիծը քննելու և հաստատելու համար հրավիրվեց խորհուրդների համամիութենական ութերորդ արտակարգ համադումարը, վորը տեղի ունեցավ 1936 թվի նոյեմբերի 25—դեկտեմբերի 5—ին:

Համաձայն ընկեր Ստալինի զեկուցման, համար

դումարում ընտրված խմբագրական հանձնաժողովում ընկեր Ստալինի նախագահութեամբ՝ նախագիծը յերկար քննարկելուց և մշակելուց հետո, Սահմանադրութեան վերջնական տեքստը համադումարն ընդունեց միաձայն: Սահմանադրութիւնն ընդունելու որը՝ զեկտեմբերի 5—ը, համադումարի վորոչմամբ հայտարարվեց համաժողովրդական տոն:

Նոր Սահմանադրութիւնն իրավամբ կոչվում է Ստալինյան: Ընկ. Ստալինը նոր Սահմանադրութեան ստեղծողն ու վորդնչողն է: Ընկ. Ստալինն այն բոլոր նվաճումների ստեղծողն ու վորդնչողն է, վոր ձեռք է բերել մեր յերկրի աշխատավորութիւնը: Ընկ. Ստալինի ղեկավարութեամբ կատարված է Խորհրդային Միութեան ինդուստրացումը, ստեղծված է մեզ մոտ սոցիալիզմի հիմք՝ հզոր ծանր արդյունաբերութիւնը: Ընկ. Ստալինի ղեկավարութեամբ մեզանում իրադործված է դուրդացիական տնտեսութիւնների կոլեկտիվացումը և վերացված է շահագործող վերջին դասակարգը՝ կուլակութիւնը: Ընկ. Ստալինի ղեկավարութեամբ սոցիալիզմը վերջնականապես և անդառնալիքով հաղթանակեց խորհրդային Միութեան մեջ և աշխատավոր մասսաները դուրս յեկան ունևոր, կուլտուրական կյանքի լայն ճանապարհը: Յեվ այդ հաղթանակներն այժմ արձանագրված են նոր Սահմանադրութեան հոգովածներում:

Տեսնենք, թե վորոնք են մեր հասարակական ու պետական կառուցվածքի հիմնական զծերն ըստ ստալինյան նոր Սահմանադրութեան:



# ՄԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ

Նոր Սահմանադրութեան մեջ Նորհրդային Միութեանն անվանել է բանվորների ու գյուղացիների սոցիալիստական պետութիւն:

Մեր պետութեան քաղաքական հիմքը հանդիսանում էն աշխատավորների պատգամավորների խորհուրդները: Նորհրդային Միութեան մեջ ամբողջ էջխանութիւնը պատկանում է քաղաքի և գյուղի աշխատավորներին՝ հանձնելու խորհուրդներին:

Սահմանադրութեան մեջ ընդգծվում է, վոր Նորհուրդներն անցին ու ամբացան կարլվածատերերի ու կապիտալիստների իշխանութիւնը տապալելու և պրոլետարիատի դիկտատուրան նվաճելու հետեանքով:

Մեր սոցիալիստական պետութեան տնտեսութեան հիմքը հանդիսանում է արտադրութեան գործիքների ու միջոցների հանրային, սոցիալիստական սեփականութիւնը և ժողովրդական տնտեսութեան սոցիալիստական կազմակերպութիւնը:

Սոցիալիստական սեփականութիւնը մեղանում յերկու ձև ունի—1) պետական, 2) կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականութիւն:

Հողը, նրա ընդերքը, ջրերը, անտառները, ֆաբրիկաները, դործարանները, հանքահորերը, հանքերը, յերկաթուղիները, ջրային և ուղային տրանսպորտը, բանկերը, կապի միջոցները (փոստ, հեռագիր, հեռաբառ, սաղիս), խորհտնտեսութիւնները, մեքենա-

տրակտորային կայանները, քաղաքների բնակարանային հիմնական ֆոնդը, կոմունալ ձեռնարկութիւնները—այս բոլորը կազմում է պետական սոցիալիստական սեփականութիւն, այսինքն՝ համաժողովրդական ունեցվածք:

Կոլտնտեսային և կոոպերատիվ ձեռնարկութիւնները, նրանց դործիքներն ու մեքենաները, նրանց անասունները, նրանց համայնական շենքերը, ինչպես նաև նրանց արտադրած մթերքները—այս բոլորը կազմում է կոոպերատիվ-կոլտնտեսային սոցիալիստական սեփականութիւն:

Կոլտնտեսութիւնների դրադեցրած հողը, Սահմանադրութեան համաձայն, ամբացվում է նրանց անվնար և անժամկետ՝ այսինքն՝ առկալետ ուղտադործելու համար, իսկ յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսութեան անձնական ուղտադործման համար ունի վտըրիկ տնամերձ հողամաս և անձնական սեփականութիւն հանդիսացող ոժանդակ տնտեսութիւն, համաձայն դյուրատնտեսական արտելի կանոնադրութեան:

Այդպիսով՝ արտելի կանոնադրութեան կարևորագույն կետերը՝ հողի, կոլտնտեսային սեփականութեան, կոլտնտեսականների անձնական սեփականութեան մասին—անցվում են Սահմանադրութեան մեջ և մեր պետութեան հիմնական որեմքի ուժ են ստանում:

Տնտեսութեան սոցիալիստական կազմակերպութիւնը Նորհրդային Միութեան մեջ տնտեսութեան գերիշխող ձևն է: Նրա հետ միասին որեմքով թույլատրվում է դյուրացի-մենատնտեսների և տնայնադործների մանր մասնավոր տնտեսութիւն՝ հիմնված անձնական աշխատանքի վրա, առանց ուրիշի աշխատանքի չափադործման:



Քաղաքացիների անձնական սեփականութեան իրավունքն աշխատանքային յեկամուտները և ինայտութունների, բնակելի տան և ոժանդակ տնային տնտեսութեան վերաբերյալ, տնային դործածութեան առարկաների, անձնական դործածութեան և հարմարութեանները վերաբերյալ, ինչպես նաև քաղաքացիների անձնական սեփականութեան ժառանգութեան իրավունքը պաշտպանվում է որեւեմով:

Խորհրդային Միութեան տնտեսական կյանքը վորոշում և նրան ուղղութիւն է տալիս պետական ժողովրդա-տնտեսական պլանը՝ հողուտ հանրային հարստութեան ակեյացման, աշխատավորները նյութական ու կուլտուրական մակարդակի անշեղ բարձրացման, հողուտ Խորհրդային Միութեան անկախութեան ու պաշտպանունակութեան ամրացման:

Աշխատանքը Խորհրդային Միութեան յուրաքանչյուր աշխատունակ քաղաքացու պարտականութիւնն ու պատվի գործն է: «Ով չի աշխատում, նա չի ուտում» — ասված է Սահմանադրութեան մեջ: Սպառման համար մթերքներ ստանալու իրավունքը տալիս է միայն աշխատանքը, համաձայն՝ «յուրաքանչյուրից՝ ըստ նրա ընդունակութեան, յուրաքանչյուրին՝ ըստ նրա աշխատանքի» սոցիալիստական կանոնի:

Այսպես է մեր Խորհրդային Միութեան հասարակական կառուցվածքն՝ ըստ նոր Սահմանադրութեան:

Խորհրդային Միութիւնը կամավոր կերպով միացած իրավահավասար խորհրդային սոցիալիստական հանրապետութիւնների միութեանական պետութիւն է:

Խորհրդային Միութեան կազմի մեջ, ըստ նոր Սահմանադրութեան, մտնում են հետևյալ միութեանական խորհրդային սոցիալիստական հանրապետութիւնները. Ռուսաստանի, Ուկրաինական, Բելոռուսական, Ադրբեջանական, Վրացական, Հայկական, Թուրքմենական, Ուզբեկական, Տաջիկական, Ղազախական, Կիրգիզական:

Յուրաքանչյուր միութեանական հանրապետութիւն ունի Միութեան Սահմանադրութեան համապատասխան կազմված իր Սահմանադրութիւնը և պետական իշխանութեան իր բարձրագույն մարմինները:

Միութեանական հանրապետութիւնները պետական իշխանութիւնը կենսադործում են ինքնուրույնաբար, բացառութեամբ այն հարցերի, վորոնք, ըստ Սահմանադրութեան, յենթակա յեն Միութեան իրավասութեանը, ինչպես, որինտի, ոտարերկրյա պետութիւնների հետ ունեցած հարաբերութիւնների հարցերը, պատերազմի և խաղաղութեան, պետական անվտանգութեան պաշտպանութեան հարցերը, արտաքին առևտրի հարցերը, Միութեան ժողովրդա-տնտեսական պլանները:

Միութեան իրավունքներն, ի դեմս նրա բարձրա-



դույն մարմիններէ, ճշտորեն վորոշլած են Սահմանագրութեամբ: Միութունը պահպանում է նրա մեջ մտնող միութենական բոլոր հանրապետութուններէ դերադույն իրավունքները:

Միութենական մի շարք հանրապետութուններէ կազմի մեջ մտնում են ավտոնոմ խորհրդային սոցիալիստական հանրապետութիւններ և ավտոնոմ մարզեր այս կամ այն ազդութեանը պատկանող բնակիչներով:

Ռուսաստանի Նորհրդային Ֆեդերատիվ սոցիալիստական հանրապետութեան կազմի մեջ, բացի ռուս բնակչութուն ունեցող յերկիրներից ու մարզերից, մտնում են հետևյալ ավտոնոմ խորհրդային սոցիալիստական հանրապետութիւնները — Թաթարական, Բաշկիրական, Դաղստանի, Բուրյատ-Մոնղոլական, Կարաբաղինո-Բալխարական, Կալմիկական, Կարելական, Կոմիի, Ղրիմի, Մարիական, Մորդովական, Մերձվոլգյան Գերմանացիների, Հյուսիսային Ռսեթական, Ուղմուրտական, Չեչենո-Ինգուշական, Չուվաշական, Յակուտական: Բացի դրանից, Ռուսաստանի հանրապետութեան կազմի մեջ մտնում են ավտոնոմ մարզեր— Ադրբեյջանական, Հրեական, Կարաչայական, Ոյրոթական, Սակասական, Չերկեսական:

Ուկրաինական խորհրդային սոցիալիստական հանրապետութեան մեջ, բացի ուկրաինական բնակչութուն ունեցող մարզերից, մտնում է Մոլդավական ավտոնոմ խորհրդային սոցիալիստական հանրապետութունը: Ադրբեյջանական հանրապետութեան մեջ մտնում են Նախիջևանի ավտոնոմ խորհրդային սոցիալիստական հանրապետութունը և Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզը: Վրացական հանրապետու-

թեան կազմի մեջ մտնում են Աբխազական, Աջարական ավտոնոմ խորհրդային սոցիալիստական հանրապետութուններն ու Հարավ-Ռսեթական ավտոնոմ մարզը: Ուղբեկական հանրապետութեան մեջ մտնում է Կարա-Կալպակական ավտոնոմ խորհրդային սոցիալիստական հանրապետութունը: Տաջիկական հանրապետութեան մեջ մտնում է Լեռնային Բադախշանի ավտոնոմ մարզը:

Ադրբեյջանական, Վրացական և Հայկական հանրապետութիւնները մինչև այժմ կազմում էյին Խորհրդային սոցիալիստական հանրապետութիւնների Անդրկովկասյան ֆեդերացիա (միավորում): Ղազախական և Կիրգիզական հանրապետութիւնները մինչև այժմ մտնում էյին Ռուսաստանի խորհրդային ֆեդերատիվ սոցիալիստական հանրապետութեան կազմի մեջ: Իսկ նոր Սահմանագրութեան համաձայն այդ հինգ հանրապետութիւններն ուղղակի մտնում են Նորհրդային Միութեան կազմի մեջ, վորպես միութենական հանրապետութիւններ: Միութեան կառավարութեան ոժանդակութեամբ այս հանրապետութիւնները դուրս յեկան սոցիալիստական զարգացման լայն ճանապարհը:

Վերցնենք, որինակ, Ղազախստանը: Դա քոչվորային յերկիր էր, անդրադետ բնակչութեամբ, սոսանց արդուեարերութեան, սոսանց յերկաթուղիների: Յարական Ռուսաստանում Ղազախստանի աշխատավորները դաժանորեն շահադործվում ու կեղեքվում էյին իրենց և ռուսական բուրժուազիայի կողմից: Այժմ Ղազախական խորհրդային սոցիալիստական հանրապետութեան մեջ բուն թափով զարգանում է արդուեարերութիւնը—Ռիդդերյան դործարանները, Մերձբալ-



խաչյան դործարանները, Կարաղանդալի անխաչան-  
քերը: Գունավոր մետաղի մշակման և քարածխի հա-  
նույթի դործում Ղաղախական հանրապետութիւնը  
ձեռք է բերել խիստ կարևոր նշանակութիւն վողջ  
Միութեան համար: Յերկաթուղիները կտրել են դա-  
ղախական տափաստանները: Գյուղացիական տնտե-  
սութիւնները չորս հինգերորդը միացած է կոլտնտե-  
սութիւնները մեջ: Մինչև հեղափոխութիւնը Ղա-  
ղախաստանում համարյա թե չկային բանվոր-ղաղախ-  
ներ, իսկ այժմ այնտեղ բնիկ ազգութիւնից 210 հա-  
զար բանվորներ կան: Բնակչութեան մեծամասնու-  
թիւնը դարձել է զբաղեալ: Ղաղախական հանրապե-  
տութիւնն ունի իր բարձրագույն ուսումնական հաս-  
տատութիւնները, իր միջնակարգ դպրոցներն ու տեխ-  
նիկումները, իր մամուլը, իր թատրոնները: Ղաղա-  
խական հանրապետութեան մեջ աճել են տնտեսական,  
կուլտուրական և պետական աշխատողները իրենց ազ-  
գային կազմերը:

Մոտավորապես նույնը կարելի յե ասել նաև մյուս  
Խորհրդային հանրապետութիւնները աճի մասին, վո-  
րոնք ըստ նոր Սահմանադրութեան դարձան միութե-  
նական հանրապետութիւններ:

Կարարդինո-Ֆալկարիան, Հյուսիսային Ոսեթիան,  
Չեչենո-Ինգուշեթիան, Մարին և Կոմին մեզ մոտ ալ-  
տոնում մարդեր էյին: Սակայն նոր Սահմանադրու-  
թեամբ այդ մարդերը դարձան ավտոնոմ հանրապետու-  
թյուններ:

Ալտոնում հանրապետութիւններն ու ավտոնոմ  
մարդերը ողտվում են ներքին կառավարման հարցերը  
ինքնուրույն կերպով լուծելու լայն իրավունքներով:  
Յուրաքանչյուր ավտոնոմ հանրապետութիւնն ունի

միութենական հանրապետութիւնների Սահմանադրու-  
թեան համապատասխան կազմված իր Սահմանադրու-  
թիւնը և պետական իշխանութեան իր բարձրագույն  
մարմինները: Ալտոնում մարդերում պետական իշխա-  
նութեան բարձրագույն մարմինն է աշխատավորների  
սպառսամալորների մարդային խորհուրդը:

Միութեան պետական իշխանութեան բարձրագույն  
մարմինը, նոր Սահմանադրութեամբ, Խորհրդային Սո-  
ցիալիստական Հանրապետութիւնների Միաբան Գե-  
րագույն Խորհուրդն է: (Մինչև այժմ այդպիսի մար-  
մին էր Խորհուրդների համամիութենական համադու-  
մարը):

Գերագույն Խորհուրդը բաղկացած է յերկու պա-  
լատներից—Միութեան Խորհուրդ և Ազգութիւնների  
Խորհուրդ:

Միութեան Խորհուրդն ընտրում են բոլոր չափա-  
հաս քաղաքացիները—300 հազար բնակից մի պատ-  
գամավորի հաշիով: Ազգութիւնների Խորհուրդն  
ընտրում են բոլոր չափահաս քաղաքացիներն ըստ  
միութենական և ավտոնոմ հանրապետութիւնների,  
ըստ ավտոնոմ մարդերի և ազգային ոկրուղների, հե-  
տևյալ հաշիով—25-ական պատգամավոր յուրաքան-  
չյուր միութենական հանրապետութիւնից, 11-ական  
պատգամավոր յուրաքանչյուր ավտոնոմ հանրապե-  
տութիւնից, 5-ական պատգամավոր յուրաքանչյուր  
ավտոնոմ մարդից և 1-ական պատգամավոր յուրաքան-  
չյուր ազգային ոկրուղից:

Յերկու պալատներն էլ իրավահավասար են: Ո-  
րենքները պետք է անցնեն յերկու պալատներից: Նը-  
րանք դումարվում են միաժամանակ: Որենքները հաս-  
տատվում են ձայների սլարդ մեծամասնութեամբ և



հրապարակվում են միութենական բոլոր հանրապետությունների լեզուներով (այսինքն՝ տառնակ լեզուներով) :

Գերազույն Խորհրդի այսպիսի կառուցվածքը լավագույն կերպով ապահովում է վոչ միայն բոլոր աշխատավորների ընդհանուր շահերը, այլև Խորհրդային Միութեան մեջ մանող բոլոր բաղմաթիվ ազգութիւնների հատուկ շահերը: Յեթե պարզի, վոչ Միութեան Խորհրդի ընդունած որենքը վորևէ կերպ խախտում է այս կամ այն ազգի շահերը, ապա Ազգութիւնների Խորհուրդն այդ որենքը կարող է մերժել: Այն ժամանակ հարցը նորից պիտի քննվի յերկու պալատներում. իսկ տարածախոսութիւնների դեպքում Գերազույն Խորհրդի Նախագահութիւնը պարտավոր է արձակել Գերագույն Խորհուրդը և նշանակել նոր քնտրութիւններ: Ահա թէ ինչպես և պաշտպանում նոր Սահմանադրութիւնը Խորհրդային Միութեան մեջ մանող՝ յուրաքանչյուր, թեկուզ և ամենամիտքը, ազգութեան իրավունքներն ու շահերը:

Մեզ մոտ չկան «վերին» և «ստորին» պալատներ, ինչպես ունեն բուրժուական պետութիւնները: Այնտեղ «վերին» պալատը կազմվում է ազնվականութեան, բարձր հոգևորականութեան, խոշոր կապիտալիստների ներկայացուցիչներին, իսկ «ստորին» պալատի մեջ ընտրվելը թույլատրվում է նաև բնակչութեան այլ դասակարգերի ներկայացուցիչներին: «Վերին» պալատը բարձր է կանգնած «ստորին» պալատից և բաց չի թողնում բուրժուազիայի վերնախավի համար անցանկալի այն որենքները, վորոնք անց են կացել «ստորին» պալատից:

Մեզանում ԽՍՀՄ-ի Գերազույն Խորհրդի յերկու

պալատներն էլ կազմվում են աշխատավորների ներկայացուցիչներին և ունեն հավասար իրավունքներ, իսկ նրանց միջև տարածախոսութիւն լինելու դեպքում հարցը թողնվում է վորոշելու ամբողջ ժողովրդին, վորը վերընտրում է Գերազույն Խորհուրդը: Դրանում, առանձնակի ուժով, արտահայտվում է մեր պետական կառուցվածքի բարձր դեմոկրատիզմը:

Գերազույն Խորհուրդը դումարում է սեսիաներ (սիստեր) տարեկան յերկու անգամ: Գերազույն Խորհրդի սեսիաների միջև ընկած ժամանակամիջոցներում Միութեան բարձրագույն պետական իշխանութիւնը հանդիսանում է Գերագույն Խորհրդի Նախագահութիւնը, վորն ընտրվում է թիով 37 հոգուց, զույգ պալատների միացյալ նիստում: Նախագահութեան իրավունքները ճշտորեն սահմանորոշված են Սահմանադրութեան մեջ: Իր ամբողջ գործունեութեան համար Նախագահութիւնը հաշվետու յէ Գերազույն Խորհրդին:

Մեզ մոտ չկա, ինչպես բուրժուական հանրապետութիւններում, միանձնյա պրեզիդենտ, վորն այնտեղ ղլխավորում է պետութիւնը և ողովում է պետական կարևորագույն հարցերը միանձնարար վորոշելու իրավունքից:

Մեզ մոտ պետութեան ղլուխ է կանգնած Գերազույն Խորհրդի կողմից ընտրված, 37 անդամից բաղկացած մի ամբողջ կոլեկտիվ, այսինքն՝ Գերազույն Խորհրդի Նախագահութիւնը: Սրանում նույնպես արտահայտվում է մեր պետական կառուցվածքի բարձր դեմոկրատիզմը:

Գերազույն Խորհուրդը յերկու պալատների միացյալ նիստում կազմում է ժողովրդական կոմիսարներ



բի խորհուրդ՝ Խորհրդային Միութեան մեր կառավարութեանը, պետական իշխանութեան բարձրագույն գործադիր ու կարգադրիչ մարմինը: Կառավարութեանը հաշվետու յե Գերագույն Խորհրդին և նրա Նախագահութեանը:

Մեր պետական իշխանութեանը յեղել և և մնում է միասնական: Նոր Սահմանադրութեանը մտցնում և միայն իշխանութեան տարբեր մարմինների իրավունքների ու պարտականութեանների ավելի պարզորոշ սահմանադատում:

Որե՞նք պետական իշխանութեանը պատկանում է բացառապես Գերագույն խորհրդին: Այդ նշանակում է, Վոր բառի իսկական իմաստով որե՞նքն էր հրատարակելու իրավունք ունի միայն Գերագույն խորհուրդը: Որե՞նք պետական նախաձեռնութեանը համար չափով պատկանում է Միութեան Խորհրդին և Ազգութեանների Խորհրդին: Գերագույն Խորհրդի Նախագահութեանը հրատարակում է հրամանագրեր, վորոնք տալիս են որե՞նքների պատշաճ մեկնաբանութեանը: Ժողովրդական կոմիտեաների խորհուրդը՝ որե՞նքների հիման վրա և ի կատարումն այդ որե՞նքների հրատարակում է վորոշումներ ու կարգադրութեանը: Ժողովրդական կոմիտեաները հրատարակում են հրամաններ և հրահանգներ: Աշխատավորների պատգամավորների խորհուրդները վորոշումներ են ընդունում և կարգադրութեանը են անում:

Արդարագատութեանը Խորհրդային Միութեան մեջ, նոր Սահմանադրութեան համաձայն, իրազորվում է ընտրովի դատարանների միջոցով: Ժողովրդական դատարաններն ընտրում են շրջանի բոլոր չափահաս քաղաքացիները՝ ընդհանուր, համար և ուղ-

ղակի ընտրական իրավունքի հիման վրա զաղտնի քվեարկութեամբ: Սահմանադրութեան մեջ ասվում է. «Դատարաններն անկախ են և միայն որե՞նքին են յենթարկվում»: Դատախաղութեան պարտականութեանը և բոլոր ժողովրդական կոմիտեաների, ինչպես և առանձին պաշտոնական անձերի ու քաղաքացիների կողմից Խորհրդային պետութեան որե՞նքները կատարելու հարկութեանը:

Յուրաքանչյուր միութեանական հանրապետութեանը ունի իր Գերագույն Խորհուրդը, Գերագույն Խորհրդի Նախագահութեանը և իր Ժողովրդական կոմիտեաների խորհուրդը: Յուրաքանչյուր ավտոնոմ հանրապետութեանը ունի իր Գերագույն Խորհուրդը և իր Ժողովրդական կոմիտեաների խորհուրդը:

Յերկիրներում, մարզերում, շրջաններում, ուղերուղներում, քաղաքներում, դյուղերում պետական իշխանութեան մարմիններ հանդիսանում են աշխատավորների պատգամավորների խորհուրդները:

Ընտրութեանը բոլոր խորհուրդներում ընդհուպ մինչև Միութեան Գերագույն Խորհուրդը կատարվում են ընդհանուր, համար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեարկութեամբ:

Այսպես և, զլիսավոր գծերով, Խորհրդային Միութեան պետական կառուցվածքն ըստ նոր Սահմանադրութեան:



## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ստալինյան Սահմանադրութեան մեջ քաղաքացիների իրավունքներին ու պարտականութիւններին հատուկ գլուխ է նվիրված :

Նորհրդային Միութեան բոլոր քաղաքացիներն ունեն աշխատանքի իրավունք, աշխինքն՝ ապահովված աշխատանքի իրավունք, աշխատանք, վորը վարձատրվում է ըստ նրա քանակի ու վորակի: Միութեան բոլոր քաղաքացիներն ունեն հանգստի իրավունք, նյութական ապահովութեան իրավունք, ծերութեան, ինչպես նաև հիվանդութեան ու աշխատունակութեան կորստի պարագայում դեպքում: Բոլոր քաղաքացիներն ունեն կրթութեան իրավունք՝ ընդհուպ մինչև բարձրագույն կրթութեանը:

ՆՍՀՄ-ի կանանց տղամարդկանց հավասար իրավունքներ են վերապահվում անտեսական, պետական, կուլտուրական ու հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում:

Բոլոր քաղաքացիների նկատմամբ ճանաչվում է բոլոր իրավունքների լիակատար հավասարութիւն անկախ ազգութիւնից ու ցեղից: Իրավունքների ամեն տեսակի, ուղղակի կամ անուղղակի, սահմանափակում կամ ընդհակառակը՝ ցեղային ու ազգային պատկանելութեանից յեղնելով՝ քաղաքացիների համար ուղղակի կամ անուղղակի առավելութեաններ սահմանելը՝ պատժվում է որենքով: Ազգային ու ցեղային բացա-

ռիկութեան կամ առեւտրութեան ու արհամարհանքի ամեն տեսակ քարոզ նույնպես պատժվում է որենքով:

Այս բոլոր իրավունքները վոչ թե պարզապես դրի յեն առնված մեր պետութեան հիմնական որենքում, այլ նրանք իրոք կյանքում լիովին ապահովված են՝ ժողովրդական տնտեսութեան սոցիալիստական կազմակերպութեամբ և մեր ամբողջ հասարակական կառուցվածքով:

Վերցնենք աշխատանքի իրավունքը: Նման ի՞նչ իրավունքի մասին կարող է խոսք լինել կապիտալիստական պետութեաններում, վորտեղ Փարբիկաները, գործարանները, հողը խոչոր սեփականատերերի մասնաւոր սեփականութեան են կազմում, վորտեք բանվորին, բատրակին, ծառայողին իրենց հայեցողութեամբ, ցանկացած ժամանակ կարող են վոնդել: Կապիտալիստական հասարակութեան մեջ շարունակ գործազուրկներ կան, իսկ անտեսական ճգնաժամերի ժամանակ նրանց թիվը տասնյակ միլիոնների յե հասնում:

Իսկ մեղանում Միութեան ամեն մի քաղաքացու աշխատանքի իրավունքն ապահովված է շնորհիվ նրա, վոր արտադրութեան բոլոր գործիքներն ու միջոցները հանրային սոցիալիստական սեփականութեան են կազմում, վոր մեղանում մարդու շահագործումը մարդու կողմից վոչնչացված է, վորչ անտեսութեանը պլանային կարգով է ղեկավարվում, մեղանում ճգնաժամեր չկան, գործազուրկութեանը վերացված է, մեր հասարակութեան արտադրողական ուժերն անընդհատ աճում են:

Հանգստի ի՞նչ իրավունքի մասին խոսք կարող է լինել կապիտալիստական յերկիրներում, վորտեղ ճեռ-



նարկութեան տերերը՝ կապիտալիստներն ու կալվածատերերը աշխատորն ըստ հնարավորութեան աշխատում են յերկարացնել և աշխատուժի վրա կատարած իրենց ծախսերը ամեն կերպ իջեցնել:

Իսկ մեղանում ամեն մի քաղաքացու հանդուսի իրավունքն ապահովվում և աշխատորը կրճատելով՝ հասցնելով 7 ժամի, բանվորներին ու ծառայողներին տրվող տարեկան արձակուրդներով, վորի ընթացքում սլահպանվում և նրանց աշխատավարձը, հանդատյան տների ու ակումբների լայն ցանցով:

Կապիտալիստական յերկիրներում ծերութեան, հիվանդութեան և անաշխատունակութեան դեպքում աշխատավորներն իրենց բախտին են թողնվում: Լավագույն դեպքում նրանք կարող են հույս դնել միայն պրոֆմիտությունների կողմից տրվող կողականոց ողնութեան վրա, պրոֆմիտություններ, վորոնց մեջ ամենևին էլ բոլոր բանվորները միացած չեն:

Իսկ մեղանում՝ ծերութեան, հիվանդութեան և աշխատունակութեանը կորցնելու դեպքում ողնութեան իրավունքն ապահովվում և բանվորների ու ծառայողների համար պետութեան հաշիին կատարվող սոցիալական ապահովագրութեամբ, ձրի բժշկական սպասարկութեամբ, հիվանդանոցների, կլինիկաների, սանատորիաների, կուրորտների լայն ցանցով:

Կապիտալիստական յերկիրներում կրթությունը բուրժուազլիայի հատուկ արտոնությունն է, վորն իր տղաներին դպրոցներում սովորեցնում և ժողովրդին հրամայել, աշխատավորներին շահագործել: Կապիտալիստական յերկիրների բանվորներն ու դյուղացիները կրթութեան մասին կարող են միայն յերազել:

Իսկ մեղանում կրթութեան իրավունքն ապահովվում

և ընդհանուր ուսուցմամբ տարրական դպրոցներում, մայրենի լեզվի ուսուցմամբ, ձրի կրթութեամբ, բարձրագույն դպրոցներում սովորողներին տրվող պետական ողնութեամբ, աշխատավորների ձրի ուսուցմամբ հենց արտագրութեան մեջ:

Սոցիալիստական կարգերն ամրացնելու նպատակով սրենք բոլոր քաղաքացիներին վերապահում և՛ խուսի ազատություն, մամուլի ազատություն, ժողովների ազատություն, փողոցային յերթերի ազատություն, անձի և բնակարանի անձեռնմխելիություն, հասարակական կազմակերպությունների՝ պրոֆեսիոնալ միությունների, կոոպերատիվ միավորումների, յերիտասարդական կազմակերպությունների, սպորտային և սլաշտպանութեան կազմակերպությունների, կուլտուրական, տեխնիկական, դիտական ընկերությունները մեջ համախմբվելու իրավունք:

Ստալինյան Սահմանագրութեան մեջ ասվում է.

«...Իսկ բանվոր դասակարգի շարքերից ու աշխատավորների մյուս խավերից ամենից ավելի ակտիվ ու դիտակից քաղաքացիները համախմբվում են Համամիութենական կոմունիստական (բոլշևիկներ) կուսակցութեան մեջ, վորն աշխատավորների առաջավոր ջոկատն է՝ սոցիալիստական հասարակարգն ամրացնելու ու զարգացնելու համար նրանց մղած պայքարում աշխատավորների բոլոր, ինչպես հասարակական, այնպես և պետական բոլոր կազմակերպությունների դեկալար կորիզն է ներկայացնում»:

Սահմանագրութեան այդ հոդվածում ընդգծված է այն մեծ նշանակութեանը, վոր ունի մեր յերկրում կամուխտական կուսակցությունը: Նրա դեկալարու-



Թյամբ աշխատավորները բոլոր Թշնամիներին հաղթեցին, բոլոր դժվարությունները հաղթահարեցին և սոցիալիստական հասարակություն ստեղծեցին: Նրա դեկալարությամբ աշխատավորները սոցիալիստական հասարակությունն ամրացնում և զարգացնում են: Կոմունիստական կուսակցությունը նվաճել է բոլոր աշխատավորների ամբողջական վստահությունն ու սերը: Մեր յերկրում բացի կոմունիստական կուսակցությունից, այլ կուսակցություն չկա: Մեղանում՝ տարրեր, իրար դեմ պայքարող կուսակցությունների համար վոչ մի հող չկա, վորովհետև մեղանում մեկը մյուսին հակադիր, մեկը մյուսի հետ պայքարող դասակարգեր չկան, ինչպես կապիտալիստական յերկիրներում: Մեղանում՝ շահագործող դասակարգերը, կալվածատերերը, կապիտալիստները, կուլակները վոչնչացված են: Մեր սոցիալիստական հասարակության շահերը, բանվորների, գյուղացիների, ինտելիգենցիայի շահերը՝ միասնական են: Յեվ այդ շահերն էլ հենց պաշտպանում է մեր կոմունիստական կուսակցությունը՝ ամբողջ ժողովրդի առաջնորդը, ղեկավարը:

Ընկեր Ստալինն ընդգծեց, վոր նոր Սահմանադրությունը «ԽՍՀՄ-ի կոմունիստական կուսակցության ներկա ղեկավար դիրքը պահպանում է առանց փոփոխության»:

Քաղաքացիների պարտականություններն են՝ պահպանել Սահմանադրությունը, կատարել որենքները, աշխատանքի կարգապահություն պահպանել, աղնվորեն վերաբերվել ղեկի հասարակական պարտքը, հարգել սոցիալիստական համակեցության կանոնները:

Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է պահպանել ու ամրացնել հանրային սոցիալիստական սեփա-

կանությունը, վորպես խորհրդային կարգերի սրբազան ու անձեռնմխելի հիմք, վորպես հայրենիքի հարստության ու հզորության աղբյուր, վորպես բոլոր աշխատավորների ունևոր ու կուլտուրական կյանքի աղբյուր:

Ձինվորական ծառայությունը Բանվոր-Գյուղացիական Կարմիր Բանակում քաղաքացիների պատվավոր պարտականությունն է: Հայրենիքի պաշտպանությունը Սորհրդային Միության յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքն է: Հայրենիքին ղավաճանելը պատծվում է վորպես ամենաճանր չարագործություն:



## ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Կալինինի անվան մանվածքային դործարանի բանվորուհի Կ. Ա. Շելեկովան նոր Սահմանադրութեան մասին ասում է .

«Վոր հողվածն էլ վոր յես կարգում եմ, այնպես ե ստացվում, ինչպես կյանքում. կարծես թե Սահմանադրութեանը կազմողները ինձ մոտ, տուն են յեկել և իմ կյանքի մասին են հարցրել»:

Յեւ իրօք, Սահմանադրութեան մեջ հիմնական որենքի ձևով գրի յե առնված այն, ինչ արդեն կյանքում կա, ինչ վոր մեմք ձեռք բերել բուրժուազիայի դեմ մղած պայքարի միջոցով: Յեթե մենք ուզում ենք նոր Սահմանադրութեանը լայլ հասկանալ, մեղ հարկավոր է դիտել, թե մեր յերկրում սոցիալիզմի համար մղվող պայքարի հետևանքով ինչպիսի մեծ փոփոխութեաններ են կատարվել:

Մեր սեռութեանը դեռևս 1918 թվի Սահմանադրութեան մեջ սոցիալիստական հանրապետութեան եր կոչվում: Բայց այն ժամանակ այդ միայն նշանակում էր, վոր մենք մեղ խնդիր ենք դրել՝ պայքարել իսկուհի սոցիալիզմի, հանուն շահագործման վրձնչացման, հանուն սոցիալիստական հասարակութեան կազմակերպման:

Այն ժամանակ մեր յերկրում սոցիալիստական շինարարութեանը նոր միայն սկսվում էր: Խոշոր ֆաբրիկաներն ու դործարանները ղրավված և սեռա-

կան սեփականութեան էյին դարձված, իսկ մանր ձեռնարկութեանները դեռևս մնում էյին վորպես մասնավոր սեփականութեան: Հողը կալվածատերերից խլված էր: Որենքի համաձայն ամբողջ հողը դարձել էր պետական սեփականութեան: Սակայն դյուրացիութեանն այդ հողի վրա տնտեսութեանը դեռևս վարում էր միանձնաբար: Կուլակութեանը դյուրում մեծ դեր էր խաղում:

Ջախջախված բուրժուազիայի մնացորդները դեռևս բավական ուժեղ էյին: Նրանք սոցիալիստական շինարարութեանն ամենակատարի դիմադրութեան էյին ցույց տալիս, խորհրդային իշխանութեան դեմ բացահայտ դիմադրություն և թաղուն պայքար էյին մղում:

1924 թվին, յերբ Խորհրդային Միութեան առաջին Սահմանադրութեանն ընդունվեց, մեր արդյունաբերութեանն արդեն վերականգնվում էր, բայց նա դեռևս հենվում էր հին, աղքատ տեխնիկայի վրա և իր արտադրանքով դեռևս հեռու յեր ցարական Ռուսաստանի արտադրանքի մինչպատերազմյան մակարդակից: Մասնավոր, կապիտալիստական ձեռնարկութեանների արտադրանքն այն ժամանակ կազմում էր ամբողջ արդյունաբերական արտադրանքի 20%-ից վոչ պակաս:

Ընկեր Ստալինի արտահայտութեամբ, դյուրացումն սեռութեանն այն ժամանակ մանր, մենաշխատ, հետամնաց տեխնիկա ունեցող տնտեսութեանների անձայրածիր ուղիղանդա էր ներկայացնում, իսկ այդ ուղիղանդամ վորպես առանձին կետեր և կղզյակներ ցրված էյին խորհանտեսութեաններն ու կոլտնտեսութեանները: Կուլակութեանը դեռևս բավական նշանակալից ուժ էր: Առևտուրը կիսով չափ գտնվում էր մասնավորների, սպեկուլանտների ձեռքում:



Այժմ մեր յերկրում կապիտալիստական ձեռնարկութունները մասին հիշատակ անդամ չի մնացել: Ուժեղներեն աճեց և զարգացավ մեր պետական սոցիալիստական արդյունաբերությունը, վորն ոժտված է նորադույն, ամենակատարելագործված տեխնիկայով: Նրա արտադրանքն ավելի քան յոթ անգամ զերազանցում է ցարական Ռուսաստանի մինչպատերազմյան արտադրանքից:

Գյուղատնտեսության մեջ ստեղծված է պետական սոցիալիստական ձեռնարկությունները՝ խորհրդանտեսությունները ու մեքենատրակտորային կայանները լայն ցանց: Գյուղացիական տնտեսությունները փոքր բացառությամբ միացած են կոլտնտեսություններին մեջ: Մեր գյուղատնտեսությունը զարձակ աշխարհում ամենախոշոր տնտեսությունը, վորն ոժտված է տրակտորներով, կոմբայններով, լավագույն մեքենաներով: Մեր հողագործությունը մեկ ու կես անգամ ավելի արտադրանք է տալիս, քան տալիս էր հին Ռուսաստանը: Մենատնտեսների ցանքերը կազմում են վոչ ավելի, քան ամբողջ ցանքերի 2—3 տոկոսը: Կուլակային կապիտալիստական տնտեսությունները վերացված են: Մասնավոր առևտուրը վերացվել է: Աճել ու ծալվել է նոր, խորհրդային առևտուրը, առևտուր՝ առանց կապիտալիստների, առանց սպեկուլանտների:

Շահագործող բոլոր դասակարգերը խորհրդային Միության մեջ ընդմիջա վերացված են: Մեր խորհրդային հասարակությունն այժմ կազմված է բացառապես աշխատավորներից, այն է՝ բանվորներից, գյուղացիներից, ինտելիգենցիայից:

«Հեղափոխության 18 տարիների ընթացքում...»

բերիզավար ընկ. Վ. Ս. Սիրուրովը—մենք լավ մաքրվեցինք, բոլոր պարագիտներին, մինչև ամենամանր պարտիզանները, մենք մաքրեցինք: Մահամահաղբությունը՝ մեր նոր հիանալի հաղուստն է, վորի վրա ամբողջ աշխարհը պեռք է հրճվանքով նայեք»:

Ահա թե ինչու նոր Մահամահաղբության հենց առաջին հողվածում գրված է.

«Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությանը բանվորների ու գյուղացիների սոցիալիստական պետությանն է»:

Այս արդեն հասարակ հայտարարություն կամ գրված, բայց դեռ լուծում չստացած խնդիր չէ: Այս կատարված գործ է:

Մահամահաղբության մեջ մեր խորհրդային Միությունը սոցիալիստական պետություն է կոչված այն պատճառով, վոր մեր ժողովրդական վոլջ տնտեսությունը զարձեղ է սոցիալիստական, վոր մեղանում չահագործող դասակարգեր չկան, վոր մեղանում վոչ չլինի չացվել է մարդու կողմից մարդու չահագործումը:

Մահամահաղբության մեջ մեր խորհրդային Միությունը բանվորների ու գյուղացիների սոցիալիստական պետություն է կոչված այն պատճառով, վոր այդ պետությունը բանվորներն ու գյուղացիներն են ստեղծել, այն պատճառով, վոր խորհրդային հասարակությունը բաղկացած է յերկու դասակարգից՝ բանվորներից և գյուղացիներից: Իսկ մեր աշխատավորական ինտելիգենցիան մի միջնախավ է, վորը բանվոր դասակարգի ու գյուղացիության հետ միասին սոցիալիստական հասարակություն է կառուցում:



## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Յերբ մեր յերկրում բուրժուազիայի մնացորդների գեմ պրոլետարիատի կատաղի պայքարն եր դնում, կարելի՞ յեր արդյոք ընտրելու իրավունք տալ բոլոր քաղաքացիներին:

Պարզ է, վոր վո՛չ: Այդ կնշանակեր թույլ տալ, վոր իշխանության ընտրություններին աշխատավորների հետ միասին մասնակցեն նաև շահագործողները, աշխատավորների դասակարգային թշնամիները:

Ահա թե ինչու մեր Սահմանադրությունը բուրժուազիային, բոլոր այն անձերին, վորոնք ապրում եյին անաշխատ յեկամուտներով, ընտրական իրավունքներին զրկում եր:

Ներկայումս մեր յերկրում այլևս շահագործողներ չկան: Խորհրդային Միության ներսում չկան մի այնպիսի ուժ, վորը թեկուզ ամենափոքր չափով կարողանար խախտել մեր պետական կարգերը: Խորհրդային Միության բնակչութիւնը կազմում է աշխատավորների միասնական ժողովուրդ, վորը լիակատար մտահոլությամբ ու սիրով է վերաբերվում իր խորհրդային իշխանությանը, ժողովրդական շահերի արտահայտիչ ու պաշտպան իր կոմունիստական կուսակցությանը:

Այժմ արդեն կարելի յէ վերացնել քաղաքացիների իրավունքների այն սահմանափակումները, վորոնք դոկտրինային ունեյին մեզ մոտ շահագործող տարրերի՝

այսպէս կոչված «ճայնադուրկներէ» նկատմամբ, և ընդհանուր ընտրական իրավունք կիրառել:

Ահա թե ինչու նոր Սահմանադրությունը բալուր չափահաս քաղաքացիներին առանց վորեւէ խտրության և անկախ նրանց անցյալ դրությունից, նրանց անցյալ գործունէությունից, տալիս է ընտրական իրավունքներ: Բացառություն են կազմում միայն խելագարները և այն անձերը, վորոնք դատարանի կողմից դատապարտված են՝ ընտրական իրավունքի զրկումով:

Իհարկէ, այն մարդկանց մեջ, վորոնք առաջ պատկանալիս են յեղել շահագործող դասակարգերին, դեռևս կան խորհրդային իշխանության քողարկված թշնամիներ: Սակայն մենք չենք հրաժարվում նրանց դեմ պայքարելուց: Մենք չենք հրաժարվում հեղափոխական զգաստությունից, այլ ընդհակառակը, այն է՛լ ավելի ուժեղացնում ենք: Նոր Սահմանադրությունը պետական անխտանդությունը պահպանող մարմինները չի վերացնում: Ընդհակառակը, նոր Սահմանադրությունը իշխանության բարձրագույն մարմինների վրա պարտականություն է դնում պահպանել մեր պետության անխտանդությունը:

Ընդհանուր ընտրական իրավունքի պայմաններում, անշուշտ, կարող է պատահել, վոր խորհրդային իշխանության քողարկված թշնամիներն ու առանձին անդիտակից քաղաքացիներ ալիտացիա մղեն խորհրդային հասարակական կազմակերպութիւնների կողմից առաջադրված թեկնածուների դեմ, և կարող է պատահել, վոր ընտրվածը դուրս գա ժողովրդին թշնամի մարդկանցից մեկը: Սակայն այդ բոլորովին էլ չի նշանակում, վոր ներկա պայմաններում հարկավոր է ընդհանուր ընտրական իրավունքը կիրառելուց հրա-



Ժարդէլ: Ընկեր Ստալինը նոր Սահմանադրութեան նախագծի մասին տրված ղեկուցման մեջ ասել է.

«Յեթե ժողովուրդը տեղ-տեղ թշնամի մարդիկ ընտրի եւ, ապա այդ կնշանակի, վոր մեր ազիտացիոն աշխատանքը չափից դուրս վատ ե դրված է. վոր մենք լիովին արժանի եյինք այդպիսի խայտառակութեան. իսկ յեթե մեր ազիտացիոն աշխատանքը բոլընէկորեն ընթանա, ապա ժողովուրդը չի թողնի, վոր իր գերագույն մարմիններէ մեջ թշնամի մարդիկ մտնեն»:

## ՀԱՎԱՍԱՐ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Մեր Հին Սահմանադրութիւնը խորհուրդների ընտրութեան ժամանակ բանվոր դասակարգին՝ դյուզի աշխատավորների համեմատութեամբ վերապահում եր վորոչ առավելութիւններ: Որինակ.—խորհուրդների համաժողովեանկան և համառուսաստանյան համագումարների ընտրութիւնները կատարվում եյին այն հաշվով, վոր քաղաքային բնակչութեան 25 հազար ընտրողներ տան մեկ պատգամավոր, իսկ գյուղական բնակչութեան 125 հազարը՝ մեկ պատգամավոր:

Բանվորների ներկայացուցչական նորման դյուզացիների ներկայացուցչական նորմայից ավելի բարձր եր: Ընտրութիւնները վոչ բոլորովին հավասար եյին:

Ինչո՞ւ յեր այդպես:

Մեր Սահմանադրութիւնը հնարովի բան չեր, կարիներեւերում չեր կազմված: Նա միայն աշխատավորների առաջավոր մասին—բանվորներին եր տալիս այն առավելութիւնը, վոր դյուզութիւն ուներ և ունի կյանքում: Բանվոր դասակարգը համախմբված ե, կազմակերպված ե, կոփված ե բուրժուազիայի գեմմիցած մարտերում: Նա յե զլխավոր ղեկավար հեղափոխական ուժը: Գյուղացիական մասսաները ժամանակ առ ժամանակ տատանվում եյին: Բանվոր դասակարգը մենակ անչեզորեն առաջնորդում եր գյուղացիներին՝ իրեն դաշնակիցներին և հասցրեց նրանց սոցիալիզմի:

«Մենք լեռների և ձորերի միջով հեռու և դժվար



ճանապարհ յեյինք կտրում.— ասում է Հյուսիսային  
Կովկասի Ստալինի անվան արտելի ոսկուտնտե-  
նական ընկեր Սատու Ցախիլովը: Այդպիսի ճանապար-  
հում անհրաժեշտ էր հուսալի, խելացի առաջնորդ ու-  
նենալ: Բանվոր դասակարգը մեզ համար հենց այդ-  
պիսի առաջնորդ է: Այժմ մենք միասին մուժ ձորերից  
դուրս յեկանք սոցիալիզմի լուսավոր հովիտը»:

Բանվորների ունեցած ընտրական իրավունքները  
առավելությունները բանվոր դասակարգի ազդեցու-  
թյունն ամրացրին, բանվորներին ողնեցին խորհրդա-  
յին իշխանությունն ամրացնելու և դյուզը դուրս բե-  
րելու դեպի սոցիալիզմ:

Բանվոր դասակարգի ղեկավարությունն այժմ էր  
անհրաժեշտ է: Ընկ. Ստալինն ընդգծեց, վոր նոր Սահ-  
մանադրությունը պահպանում է բանվոր դասակարգի  
պետական ղեկավարությունը աշխատավորության  
նկատմամբ, այսինքն՝ պահպանում է բանվոր դասա-  
կարգի ղեկատարումը: Իսկ դյուզացիներն այժմ իրենց  
գիտակցականության, իրենց իսկական շահերը հաս-  
կանալու տեսակետից անհամեմատ աճել են: Գյուղա-  
ցիները, դառնալով կուտնտեսական, խորհրդային իշ-  
խանության, բանվոր դասակարգի ամուր հեմարանն  
են դարձել:

Ներկա պայմաններում վոչ մի հիմք չկա, վոր-  
պեսզի դյուզացիները խորհուրդների մեջ իջեցրած նոր-  
մայով ներկայացուցիչներ ընտրեն:

Ահա թե ինչու ըստ նոր Սահմանադրության գյու-  
ղացիներն ստանում են բանվորների հետ, խորհրդային  
Միության բոլոր աշխատավորների հետ, լիովին հա-  
վասար իրավունքներ:

## ՈՒՂՂԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրությունները մեզ մոտ հետևյալ ձևով էյին  
կատարվում: Քաղաքային և դյուզական խորհուրդները  
պատգամավորներին անմիջապես ընտրողների տեղա-  
կան ժողովներն էյին ընտրում: Այդ ընտրություններն  
ուղղակի ընտրություններ էյին: Խորհուրդների շըր-  
ջանային համադրումարների պատգամավորներին արդեն  
վոչ թե ընտրողների ժողովներն էյին ընտրում, այլ  
քաղաքային և դյուզական խորհուրդները: Այդ ըն-  
տրությունները յերկաստիճան ընտրություններ էյին:  
Խորհուրդների մարզային, յերկրային համադրումարնե-  
րի պատգամավորներին խորհուրդների շըջանային հա-  
մադրումարներն էյին ընտրում: Այստեղ ընտրություն-  
ները յեռաստիճան էյին: Վերջապես խորհուրդների  
համամիութենական և համաուսաստանյան համադու-  
մարների պատգամավորներին խորհուրդների մարզա-  
յին, յերկրային համադրումարներն էյին ընտրում:  
Այստեղ ընտրությունները քառաստիճան էյին:

Ինչո՞վ էր բացատրվում ընտրությունների այս-  
պիսի կարգը:

Այդ անհրաժեշտ էր այն տարիներում, յերբ դյու-  
զացիական մասսաները ժամանակ առ ժամանակ ունե-  
կընդրում էյին կուլակության և բուրժուազիայի այլ  
մնացորդների ձայնին: Ընտրությունների բազմաստի-  
ճանությունը, ինչպես նաև բանվորների ներկայացու-  
ցիչների համար սահմանված բարձր նորման, նպաս-  
տում էյին, վոր խորհուրդների մեջ ընտրվեն խորհը-



դային իշխանության կայուն, համոզված կողմնակիցներ :

Այժմ դյուղացիական մասնանները սովորեցին իրենց բարեկամներին թշնամիները լավ տարբերել : Ժողովը դահան մասնանները զիտեն, վոր իրենց կյանքի արժատական բարեկաման և բոլոր նվաճումների համար նրանք պարտական են բոլշևիկյան կուսակցության ամուր, իմաստուն ղեկավարության և նրա առաջնորդներ Լենինին ու Ստալինին : Ժողովուրդն այժմ լավ է ճանաչում իր մարդկանց և յուրաքանչյուր քաղաքում, ամեն մի գյուղում անմիջապես իշխանության բարձրագույն մարմինների մեջ կկարողանա ընտրել ժողովրդի իսկական ներկայացուցիչներին, սոցիալիստական շինարարության լավագույն ղեկավարներին, խորհրդային հայրենիքի կայուն պաշտպաններին :

Ահա թե ինչու նոր Սահմանադրությամբ իշխանության բոլոր մարմինների բաղմաստիճան ընտրությանները փոխարինվում են ուղղակի ընտրությաններով ընդհուպ մինչև բարձրագույն մարմինները :

Աշխատավորներն անմիջապես տեղերում պետք է ընտրեն վոչ միայն քաղաքային, դյուղական խորհուրդներ, վոչ միայն չրջանային, ոկրուգային, յերկրային, մարդային խորհուրդներ, այլ նաև հանրապետությաններ ղեկավարող խորհուրդներ, վողջ Միության Գերագույն Խորհուրդը և Միության Ազգությաններ խորհուրդը :

Այդ լավագույն կերպով կապահովի մեր հսկայական յերկրի աշխատավորների շահերը :

Մեղանում խորհուրդների պատգամավորների ընտրությունը կատարվում էր ձեռքերի և մանդատները պարզ բարձրացումով : Ընտրությանները բաց էին :

Բաց քվեարկությունը խորհրդային իշխանության թշնամիներին խանդարում էր իրենց կողմնակիցներին ծածկաբար խցկելու խորհուրդների մեջ :

Այժմ բաց քվեարկությունը փոխարինվում է փակ, գաղտնի քվեարկությամբ :

Թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեն կամունիստական կուսակցական կադմակերպությանները և աշխատավորների անկուսակցական հասարակական կադմակերպությանները :

Ընկեր Ստալինը բացատրել է, վոր փակ քվեարկությունը դործադրության մեջ է դրվում, վորպեսզի «խորհրդային մարդկանց լիակատար ազատություն տրվի քվեարկելու նրանց ոգտին, ում նրանք ցանկանում են ընտրել, ում նրանք վստահում են իրենց շահերի պաշտպանությունը» :

Իսկ յեթե ընտրողների մեծամասնությունը «վիժեցնի» (չընտրի) վորեւե թեկնածուի, կնշանակի, թե նա վորեւե բանով չի արժանացել ընտրողների վստահությանը :

Ընկեր Ստալինը 1936 թվի մարտին ասում էր .

«Պատահում է, վոր իշխանության այս կամ այն տեղական որդանն անձեռնհաս է բավարարելու քաղաքի և գյուղի աշխատավորության բաղմակող-



Քանի և հարածուն պահանջներին վորեւ մեկը :  
Լավ դպրոց կառուցե՞լ ես արդյոք, թե չես կառու-  
ցել : Բնակարանային պայմանները բարելավե՞լ ես  
արդյոք դու : Դու բյուրոկրատ չե՞ս արդյոք : Ու-  
նե՞լ ես դու արդյոք մեր աշխատանքն ավելի ե-  
ֆեկտավոր\* , մեր կյանքն ավելի կուլտուրական  
դարձնելու : Ահա այն կրիտերիումները\*\* , վորոն-  
ցով միլիոնավոր ընտրողներ պետք ե մոտենան  
թեկնածուներին , դեն չպրտելով անպետքներին ,  
ջնջելով նրանց ցուցակներին , առաջ քաշելով լա-  
վագույններին և առաջադրելով նրանց թեկնածու-  
թյունները . . .

Մեր ընտրական նոր սիստեմը կղգաստացնի բո-  
լոր հիմնարկներին և կազմակերպություններին ,  
կստիպի նրանց բարելավել իրենց աշխատանքը :  
Ընդհանուր , հավասար , ուղղակի և դադտնի ըն-  
տրությունները ԽՍՀՄ-ում մտրակ կղառնան  
բնակչության ձեռքում իշխանության վատ աշխա-  
տող մարմինների դեմ :

Մեր նոր խորհրդային Սահմանադրությունն ,  
իմ կարծիքով , կլինի ամենադեմոկրատական սահ-  
մանադրությունն աշխարհում գոյություն ունե-  
ցող բոլոր սահմանադրություններին» :

Ստալինյան Սահմանադրությունը հանդիսանում ե  
խորհրդային իշխանության ժամանակաշրջանի , հատ-  
կապես վերջին տարիների , մեր նվաճումների համա-  
ռոտ ամփոփումը : Նա փոզեչնչում ե բանվոր դասա-

\* Այսինքն՝ արդյունավետ :

\*\* Այսինքն՝ չափանիշները :

կարգին , դյուղացիությանը և աշխատավոր ինտելի-  
դենցիային հետագա պայքարի՝ հանուն նոր նվաճում-  
ների , հանուն սոցիալիզմի ու կոմունիզմի լիակատար  
հաղթանակի՝ ամբողջ աշխարհում :



## ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր Սահմանադրութեան ամբողջ մեծութեանը հատկապես պարզ և դառնում, յեթե մենք մի հայացք դրենք բուրժուական պետութեանների սահմանադրութեանների վրա:

Նրանցից մի քանիստում խոսվում և պատուութեան և հավասարութեան մասին: Բայց ի՞նչ «պատուութեան» կարող և լինել այն հասարակութեան մեջ, վորտեղ ժողովրդական մասսաների կյանքը կախված և մի խումբ հարուստ սեփականատերերից, կապիտալիստներից և կալվածատերերից, վորտեղ աշխատավորներն ստիպված են վաճառել իրենց աշխատուժը մի կտոր հացի համար: Ի՞նչ «պատուութեան» կարող են ունենալ միլիոնավոր գործազուրկներ, վորոնք իրենց աշխատանքը գործազրկելու ասպարեզ չեն դնում: Ի՞նչ «հավասարութեան» կարող և լինել շահագործվողի ու շահագործողի միջև, սեփականատիրոջ և չունևորի միջև, կուլտի և քաղցածի միջև:

Կապիտալիստական հասարակութեան մեջ անտեսական ուժը՝ արտադրութեան բոլոր կարևորագույն միջոցները, բոլոր հարստութեանները գտնվում են բուրժուակալի ձեռքում: Նրա ձեռքումն են դարձուցները, համալսարանները, թերթերը, տպարանները, թղթի ֆաբրիկաները, ժողովների համար անհրաժեշտ չենքերը: Նրա ձեռքումն են վոստիկանութեանը, գոր-

քը, աստիճանավորները, դատավորները, տերտերները և այլն:

Չարմանալի չէ, վոր ինչ սահմանադրութեան ևլ լինի, բուրժուակալի լիակատար հնարավորութեան ունի ազահոզելու իր տիրապետութեանը մասսաների վրա: Ինչ սահմանադրութեան ևլ լինի, բուրժուակալի կարողանում և ընտրութեաններն այնպես դատավորել, վոր միշտ իշխանութեան գլուխ են անցնում կապիտալիստների ու կալվածատերերի կուսակցութեանները:

Կապիտալիստական պառլամենտների պատգամավորների մասին ամերիկյան բուրժուական գրող Կենտն ասում և.

«Իբր թե ժողովուրդը ներկայացնող պատգամավորներին քաշում և ձգում են, դնում և ծախում են մեծաքանակ ու փոքրաքանակ, համոզում կամ խաբում են: Անկախ պատգամավորները միշտ մնում են թույլ փոքրամասնութեան մեջ»:

Կապիտալիստական պետութեաններում փաստորեն խոշոր բուրժուակալի և կառավարում—փողային տուղերը, յերկաթի, ածխի, նավթի արքաները, թնդանութների արքաները և այլն: «Ժողովրդական ներկայացուցչութեանը»՝ պառլամենտը հաճախ պարզապես «քվեարկող» մեքենա յե հանդիսանում բուրժուակալի ձեռքում:

Իսկ Ֆաշիստական Գերմանիայում, պառլամենտի դուրս յեկած պատգամավորների տեղ նորերը պարզապես նշանակվում են Ֆաշիստական կուսակցութեան նախագահի կարգադրութեամբ: Պառլամենտն ինքը միայն նրա համար և հավաքվում, վորպեսզի լսի ղեկավարների ձառերն ու ցրվի: Ճաշխատական Լեհաստանի նոր սահմանադրութեան մեջ ուղղակի գրված և, վոր



պետութեան ղեկավարը պատասխանատու չե միայն...  
աստծու և պատմութեան առաջ: Նշանակում է, կա-  
ռավարիչը, ինչպէս ուղում ես:

Սակայն այս բոլորը չի նշանակում, թե աշխատա-  
վորների համար բոլորովին միևնույն է, թե ինչ սահ-  
մանադրութիւնն կա այս կամ այն բուրժուական պե-  
տութեան մեջ: Բուրժուա-դեմոկրատական սահմանա-  
դրութիւններն, այսուամենայնիւ, բանվորները և գյու-  
ղացիները համար վերապահում են վորոչ սահմանա-  
փակ իրավունքներ, ինչպէս, որինակ, ժողովներ կազ-  
մակերպելու, իրենց կազմակերպութիւնները ստեղծե-  
լու, իրենց թերթերը հրատարակելու իրավունք. այդ  
բոլորն, իհարկե, բուրժուական իշխանութեան թույլ-  
տուութեամբ և նրա հսկողութեան տակ: Ֆաշիստական  
պետութիւններում աշխատավորները վոչ մի իրավունք  
չունեն—այնտեղ ժողովրդի վրա թալանարարութեամբ է Ֆա-  
շիստական զինված բանակների մերկ բռնութիւնը:  
Ահա թե ինչու բանվորներն արտասահմանում պաշտ-  
պանում են բուրժուական դեմոկրատիան ընդդէմ Ֆա-  
շիզմի:

Սակայն բանվորները բուրժուական դեմոկրատի-  
ան թույլ չեն տալիս աշխատավորներին խարելու ա-  
զատութեան և հավասարութեան լոզունգներով: Ազա-  
տութիւնն ու հավասարութիւնը բուրժուական հասա-  
րակութեան մեջ՝ այդ սուտ է և կեղծավորութիւն:

«Իսկական ազատութիւն,—ասում է ընկեր Ստա-  
լինը,—կա միայն այնտեղ, վորտեղ վոչնչացված է շա-  
հագործումը, վորտեղ չկա վորոչ մարդկանց ճնշում  
մյուսների կողմից, վորտեղ չկա գործազրկութիւն և  
աղքատութիւն, վորտեղ մարդ չի դողում, թե վաղը  
կարող է կորցնել աշխատանքը, բնակարանը, հացը:

Միայն այդպիսի հասարակութեան մեջ հնարավոր է  
իսկական և վո՛չ թղթե, անձնական և ամեն տեսակի  
այլ ազատութիւն»:



## ՄԵՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային նոր Սահմանադրության նախագիծը և համադրումարի կողմից ընդունված նրա տեքստը տպագրված են արտասահմանի հաղարավոր թերթերում: Արտասահմանյան յերկիրների բանվորներն ու դյուղացիները կարգում են մեր Սահմանադրությունը, համեմատում են այն կապիտալիստական յերկիրների սահմանադրությունների հետ: Յեւ ի՞նչ են նրանք տեսնում՝

Իրենց մոտ՝ կապիտալիստների և կալվածատերերի բուրժուական պետություն:

Մեզանում՝ բանվորների և դյուղացիների Սոցիալիստական պետություն:

Իրենց մոտ՝ հողը, Փաբրիկաները, գործարանները, հարստությունը մասնավոր սեփականություն են:

Մեզանում՝ հողը, ձեռնարկությունները, արտադրության գործիքներն ու միջոցները կազմում են հասարակական, սոցիալիստական սեփականություն:

Իրենց մոտ՝ սահմանադրությունները պաշտպանում են մասնավոր սեփականությունը, վորպես կապիտալիստական, շահագործողական կարգերի հիմք, վորպես հարուստների շահույթի աղբյուր:

Մեզանում՝ Սահմանադրությունը հանրային սեփականությունը հայտարարում է սրբազան ու անձեռնմխելի, վորպես սոցիալիստական կարգերի հիմք,

վորպես աշխատավորների ունեւոր և կուլտուրական կյանքի աղբյուր:

Իրենց մոտ՝ ժողովրդական մասսաները հարստահարված են, շահագործվում են կապիտալիստների, կալվածատերերի, կուլակների, վաճառականների, վաշխառուների կողմից:

Մեզանում՝ չկա հարստահարում, չկան շահագործողներ, չկա շահագործում:

Իրենց մոտ՝ գործադրկությունը, աղքատությունը, քաղցն և միլիոնավոր մասսաների բաժինը:

Մեզանում՝ գործադրկություն չկա, մեզանում պետությունն ապահովում է յուրաքանչյուր քաղաքացու առօրյա բոլոր կարիքները—աշխատանքի իրավունք, հանդստի իրավունք, ծերություն և հիվանդություն ժամանակ ողնություն ստանալու իրավունք, կրթություն ստանալու իրավունք:

Իրենց մոտ՝ մոտավորապես պետությունների կեսի մեջ, կանայք իսպառ զրկված են ընտրական իրավունքներից: Այդ պետությունների թվին են պատկանում Իտալիան, Ճապոնիան, Պրանսիան, Բելգիան, Շվեյցարիան, Հարավսլավիան, Հունաստանը և Արգենտինան: Մնացած յերկիրներում կանանց ընտրական իրավունքները խիստ սահմանափակված են:

Մեզանում՝ կանայք տղամարդկանց հավասար ընտրական իրավունքներ են վայելում: Մեզանում պետական, տնտեսական, հասարակական կյանքի բոլոր բնագավառներում կանանց վերապահված են տղամարդկանց հավասար իրավունքներ:

Իրենց մոտ՝ ընտրական իրավունքներից զրկված է յերիտասարդության զգալի մասը՝ հատկապես 18-21 տարեկան հասակի յերիտասարդությունը, իսկ շատ



յերկիրներում նաև ավելի մեծերը: Այսպես, որինակ, Հունդարիայում և Լեհաստանում ընտրական իրավունքից զուրկ են մինչև 24 տարեկան, Հյուսիսային Ամերիկայում մինչև 25 տարեկան յերիտասարդները: «Վերին» պալատի ընտրութիւնների համար ավելի ևս բարձր հասակ է սահմանված, — Հյուսիսային Ամերիկայում՝ 30 տարեկան, Ֆրանսիայում՝ 40 տարեկան:

Մեղանում՝ բոլոր չափահաս քաղաքացիները, 18 տարեկանից սկսած, ընտրական իրավունք ունեն:

Իրենց մոտ՝ ընտրական իրավունքներից զրկված է բանվորների զգալի մասը. հատկապես բոլոր այն բանվորները, բատրակները, գործազուրկները, վորոնք մի վայրում յերկար չեն ապրում: Ընտրական իրավունքներից զրկված են ղինվորականները: Սահմանափակված են այն քաղաքացիների իրավունքները, վորոնք բավարար յեկամուտ չեն ստանում և կրթութիւն չունեն:

Մեղանում բոլոր քաղաքացիները, անկախ դուրքային դրութիւնից, զբաղմունքի տեսակից, նստակեցութիւնից, կրթութիւնից, հավասար ընտրական իրավունք ունեն:

Իրենց մոտ, շատ պետութիւններում, ինչպես, որինակ, Լեհաստանում, Ռումինիայում, Հարավսլավիայում և այլն, խստիվ կրճատված են այդ յերկիրների ճնշված ազգերի ընտրական իրավունքները: Գերմանիայում հետապնդվում են «ստորին ցեղի», այսինքն՝ դերմանացիներից տարբեր ծագում ունեցող (այլ լեզու, մորթու այլ դույն ունեցող) քաղաքացիները:

Մեղանում բոլոր քաղաքացիները, անկախ ազգութիւնից և ցեղից, հավասար ընտրական իրավունքներ

ունեն: Մեղանում ցեղային պատկանելութիւնից յերկրով կատարված՝ իրավունքների ամեն տեսակ սահմանափակում, ցեղային բացառիկութիւն և ատելութիւն ամեն տեսակի քարոզ պատժվում է որեւեմով:

Միայն մեղանում, Խորհրդային սոցիալիստական պետութիւն մեջ է կիրառելի իրապես ընդհանուր, իրապես հավասար, ուղղակի ընտրական իրավունք՝ դադանի քվեարկութիւնով:

Միայն մեր սոցիալիստական յերկրում պետութիւնն իրապես կառավարում է ինքը ժողովուրդը, իրեմք աշխատավորները—բանվորները, գյուղացիները, ինտելիգենցիան: Միայն մեր սոցիալիստական պետութիւն մեջ է իրագործվում ամենալիակատար, իսկական դեմոկրատիա—սոցիալիստական դեմոկրատիա, ինչպես անվանեց այդ դեմոկրատիան ընկեր Ստալինը:

Հասկանալի յե, թե ինչպիսի՛ հեկայական, անդիմադրելի տպավորութիւն է գործում մեր Սահմանադրութիւնը կապիտալիստական յերկիրների շահագործվող աշխատավորական մասսաների վրա: Յուրաքանչյուր բանվոր, յուրաքանչյուր՝ դուրդացի ստալինյան մեծ Սահմանադրութիւն պարզ խոսքերի մեջ տեսնում և զգում է, վոր սոցիալիզմ՝ նշանակում է աշխատավորների բոլոր պահանջների ու կարեքների լիակատար բավարարում և իրենց կյանքն իրենց ձեռքով՝ ինչպես իրենք են ուզում, կառուցելու լիակատար ազատութիւն: Որինակ.—բանվոր Կարլ Կոսը Պրադայից ասում է.

«Յերբ յես ուղիոյով Մոսկվայից լսեցի Սահմանադրութիւն տեքստը, իմ հոգում աոն էր: Ինչպե՛ս կուզէյի բղավել բոլորին—նայե՛ք, ինչի հասան մեր յեղբայրները Խորհրդային Միութիւն մեջ»:



Մեր Սահմանադրութիւնն ակնառու կերպով հեր-  
 քում է բոլոր այն սուտն ու զրպարտութիւնը, վոր  
 բուրժուազիան տարածում է արտասահմանում խոր-  
 հրդային հանրապետութիւններէ մասին: Մեր Սահմա-  
 նադրութիւնը կապիտալիստական յերկիրներէ բանվո-  
 բական և գյուղացիական մասսաներէ համար իրենց  
 շահագործողներէ դեմ պայքարելու ծրագիր է և նրանց  
 հաղթելու յերաշխիք:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Սահմանադրութիւնը . . . . .	6
Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններէ Միութիւնը . . . . .	10
Խորհրդային Միութեան ժողովուրդներէ իրավահավասար- ութիւնը . . . . .	14
Ընկեր Ստալինը նոր Սահմանադրութեան ստեղծողն է . . . . .	18
Մեր հասարակական կառուցվածքն ըստ նոր Սահմանա- դրութեան . . . . .	20
Մեր պետական կառուցվածքն ըստ նոր Սահմանադրութեան Քաղաքացիներէ իրավունքներն ու պարտականութիւնները Բանվորներէ ու գյուղացիներէ սոցիալիստական պետու- թիւնը . . . . .	23 32
Ընդհանուր ընտրական իրավունքը . . . . .	33
Հավասար ընտրական իրավունքները . . . . .	42
Ուղղակի ընտրութիւններ . . . . .	45
Պաղանի քվեարկութիւն . . . . .	47
Բուրժուական սահմանադրութիւնները . . . . .	49
Մեր Սահմանադրութեան միջադրային նշանակութիւնը . . . . .	52 56



Թարգմ. Գ. Ղուկասյան  
Խմբ. Մ. Հովհաննիսյան  
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան  
Սրբագրիչ Վ. Ջիդեջյան  
Կոնտր. սրբ. Լ. Արովյան

---

Գլավիտի լիազոր ք—4873, հրատ. № 437,

Պատվեր № 60, տիրաժ 5000, ինդեքս  $\frac{\text{II}-84}{\text{PK}}$

Հանձնվել է արտադրության 29/III 1937 թ.

Մտորագրված է տպագրության 16/IV 1937 թ.

Գին՝ 40 Կ.

Հայկուսհրատի տպարան, Յերևան, Ալլահվերդյան № 71



30

ՀՀ Ազգային գրադարան



NL0927878



11 МАЯ. 1937

235

ФБС 40 4.

1  
3474



**В. КАРШИНСКИЙ**  
**НАША НОВАЯ КОНСТИТУЦИЯ**  
Армивртвездат, Бреслав, 1937